



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENT**

ՆԱԽԱԲԱՆ 3
PREAMBLE..... 3

1. ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ 3
1. SUBJECT OF WORK CONTRACT 3

2. ՊԱՏՎԻՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ..... 3
2. ORDERING PROCEDURE..... 3

3. ՆԱԽԱՀԱՆՈՒՄ..... 6
3. ESTIMATE 6

4. ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ..... 6
4. MATERIALS, EQUIPMENT AND TOOLS..... 6

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ..... 7
5. CONDITIONS OF EXECUTION OF THE WORKS 7

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԵՐ 8
6. ACCEPTANCE OF WORKS..... 8

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՆՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ..... 8
7. ELIMINATION OF DISCREPANCIES AND DEFICIENCIES OF THE RESULT OF THE WORKS 8

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ..... 10
8. PRICE OF THE CONTRACT AND PAYMENT CONDITIONS..... 10

9. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 10
9. INTELLECTUAL PROPERTY RIGHTS..... 10

10. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 12
10. RESPONSIBILITIES OF THE PARTIES..... 12

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ 13
11. DURATION AND TERMINATION OF THE CONTRACT..... 13

12. ԶԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 14
12. CONFIDENTIAL INFORMATION..... 14

13. ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... 16



*Գործողության վայր/ Place of scope: ԳՅ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021*

13. PRIVACY AND DATA PROTECTION	16
14. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ	16
14. FORCE MAJEURE	16
15. ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	17
15. GOVERNING LAW AND DISPUTES RESOLUTION	17
16. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ	17
16. NOTIFICATIONS	17
17. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ	18
17. OTHER CONDITIONS	18
18. ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	21
18. INSURANCE	21
19. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	23
19. CONCLUSIVE PROVISIONS	23
ՊԱՏՎԵՐ / ORDER N _____	25
ՓՈՓՈԽՎԱԾ ՊԱՏՎԵՐ / CHANGED ORDER N _____	27
Հավելված # 3 Կապալի պայմանագրի ընդհանուր պայմանների/	29
Appendix # 3 to the General Terms of Work contract	29

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

ՆԱԽԱԲԱՆ	PREAMBLE
<p>Համագործակցության սույն ընդհանուր պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) կարգավորում են «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ԶԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ԶԱՍՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և աշխատանքներ կատարողների (այսուհետ՝ Կապալառու կամ Կապալառուներ) միջև համագործակցությունը,</p>	<p>These general terms of cooperation (hereinafter referred to as the Terms) govern the rules of the “COCA-COLA HELLENIC BOTTLING COMPANY ARMENIA” CJSC’s (hereinafter referred to as the Customer) interaction with work executors (hereinafter referred to as the Contractor or Contractors),</p>
<p>հետագայում առանձին հիշատակման ժամանակ այսուհետ՝ Կողմ, կամ ինչպես սահմանված է վերը, համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ Կողմեր:</p>	<p>hereinafter separately referred to as the Party, or as defined above, together referred to as the Parties.</p>
<p>Պայմանագրերը (առկայության դեպքում), ներառյալ բոլոր հավելվածները, լրացուցիչ համաձայնագրերը, կից փաստաթղթերը, տեխնիկական բնութագրերը, գծագրերը, նշումները, պատվերները և այլ տեղեկություններ, ինչպես նաև Պայմանները միասին ներկայացնում են Պատվիրատուի և Կապալառուի միջև գործարքի ամբողջ շրջանակը պայմանագրի պայմանների վերաբերյալ, որի առարկան նշված է պատվերում և (կամ) պայմանագրում:</p>	<p>Contracts (if any), including all annexes, additional agreements, attachments, technical specifications, drawings, notes, orders and other information, as well as the Terms together represent the full scope of agreements between the Customer and the Contractor regarding the terms of the contract, the subject of which is indicated in the order and/or contract.</p>
<p>Եթե առկա են հակասություններ գրավոր պայմանագրի և/կամ Պայմանների միջև, փաստաթղթերը գերակայում են հետևյալ կարգով.</p> <ol style="list-style-type: none"> 1. գրավոր պայմանագիր 2. Պայմաններ 	<p>If there are disagreements between the terms of the written contract and/or the Terms, the documents shall prevail in the following order:</p> <ol style="list-style-type: none"> 1. written contract 2. Terms
<p>1. ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</p>	<p>1. SUBJECT OF WORK CONTRACT</p>
<p>1.1. Կապալի պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Պայմանագիր) Կապալառուն պարտավորվում է սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետներում կատարել աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանքներ) և դրանց արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վճարել դրա դիմաց՝ Պայմաններով և Պայմանագրով նախատեսված չափով և կարգով:</p>	<p>1.1. Based on the work contract (hereinafter referred to as the Contract) the Contractor shall execute works (hereinafter referred to as the “Works”) according to the conditions and terms defined by this Terms and Contract and transfer the result to the Customer and the Customer shall accept the result of the Works and pay for it in accordance with the sizes and conditions set forth by this Terms and Contract.</p>
<p>1.2. Կապալառուն կատարում է Աշխատանքներ Կողմերի միջև Պայմանագրին համապատասխան համաձայնեցված Պատվերի հիման վրա, որում սահմանվում են համապատասխան Աշխատանքների, դրանց արդյունքի նկարագրությունը, դրանց որակական և քանակական բնութագրերը, Աշխատանքների կատարման ժամկետները և այլ պայմաններ:</p>	<p>1.2. The Contractor shall execute the Works on the basis of the order agreed by the Parties according to the Contract, in which are defined description of the Works, their result, quantitative and qualitative characteristics of the Works, terms and other substantial conditions of execution thereof.</p>
<p>1.3. Կապալառուն Աշխատանքները կատարում է անձամբ: Կապալառուն իրավունք ունի Աշխատանքների կատարմանը մասնակից դարձնել երրորդ անձանց միայն այդ մասին Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության առկայության դեպքում: Մինևս սահմանակապալառուն չի կարող փոխանցել Պայմանագրից բխող իր իրավունքները և պարտականությունները (ներառյալ՝ փոխանցել պարտքը) ցանկացած այլ անձի՝ առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:</p>	<p>1.3. The Contractor shall execute the Works personally. The Contractor may involve third parties in the execution of the Works only in case there is a prior written agreement of the Customer thereon. At the same time the Contractor cannot transfer rights and responsibilities raising from this Contract (including debt transfer) to any other party – without written agreement of the Customer.</p>
<p>2. ՊԱՏՎԻՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿՎՐԳԸ</p>	<p>2. ORDERING PROCEDURE</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>2.1. Պատվիրատուն մինչև Պայմանագրի հիման վրա Կապալառուի կողմից Աշխատանքների կատարման պատվիրումը և համապատասխան Պատվերի վերջնականացումն ու երկկողմանի հաստատումը, էլեկտրոնային եղանակով Կապալառուին է ներկայացնում նախնական պատվեր (այսուհետ՝ Նախնական Պատվեր), որում սահմանում է իրեն անհրաժեշտ Աշխատանքների և դրա արդյունքի նախնական նկարագիրը, որակը, մոտավոր քանակը, գնային սահմանը, այլ անհրաժեշտ տեղեկատվություն և կատարման ժամկետները:</p>	<p>2.1. The Customer before ordering and finalization and mutual approval of the respective Order based on the Contract, via electronic communication presents to the Contractor preliminary order (hereinafter referred to as the "Preliminary Order"), where defines preliminary description, quality, approximate quantity, price range, other necessary data of the Works and their result required by the Customer and terms of execution.</p>
<p>2.2. Կապալառուն պարտավոր է Նախնական Պատվերը ստանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Նախնական Պատվերի հիման վրա ձևավորված առաջարկ (այսուհետ՝ Առաջարկ)՝ առնվազն 3 (երեք) տարբերակներով: Պատվիրատուն իրականացնում է Կապալառուի կողմից ներկայացված Առաջարկի դիտարկում և, էլեկտրոնային Պատվիրատուի անհրաժեշտությունից,</p>	<p>2.2. The Contractor is obliged within 5 (five) days upon receipt of the Preliminary Order provide the Customer offer formalized based on the Preliminary Order (hereinafter referred as to the "Offer") with minimum 3 (three) options. The Customer conducts the review of the Offer and based on the needs of the Customer,</p>
<p>2.2.1. Տեղեկացնում է Կապալառուին Առաջարկն այդ պայմաններով իր համար ընդունելի լինելու մասին, կամ,</p>	<p>2.2.1. Informs the Contractor about the acceptability of the Offer for the Customer by the offered conditions, or,</p>
<p>2.2.2. որոշակի փոփոխությունների անհրաժեշտության դեպքում՝ Կապալառուի համաձայնեցմանն է ներկայացնում համապատասխան Առաջարկը՝ իր մեկնաբանություններով և ուղղումներով:</p>	<p>2.2.2. In case of need of certain modifications presents the Offer with the comments and adjustments for alignment with the Customer.</p>
<p>2.3. Առաջարկը Պատվիրատուի կողմից ընդունելի լինելու պարագայում, եթե Պատվիրատուի մոտ պահպանվել է Աշխատանքների արդյունքի նկատմամբ հետաքրքրությունը, Պատվիրատուն, իրականացնելով սույն Պայմանների 2.2.1. կետով սահմանված գործողությունները, կազմում է համապատասխան պատվեր սույն Պայմաններին Չավելված 1-ով սահմանված ձևի հիման վրա (այսուհետ՝ Պատվեր) և ընթացք տալիս դրա՝ Կողմերի կողմից երկկողմանի հաստատմանը՝ սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:</p>	<p>2.3. In case of acceptance of the Offer by the Customer, if the Customer is still interested in the result of the Works, the Customer, by conducting actions of 2.2.1. clause of this Terms, forms respective order based on the template provided in appendix 1 to the Terms (hereinafter the Order) and proceeds with the bilateral approval of it by the Parties according to the terms and conditions of this Contract.</p>
<p>2.4. Առաջարկը Պատվիրատուի կողմից ընդունելի չլինելու պարագայում, վերջինս իրականացնում է սույն Պայմանների 2.2.2. կետով սահմանված գործողությունները, իսկ Կապալառուն պարտավոր է իրականացնել սույն Պայմանների 2.2. կետով սահմանված կարգով և ժամկետում արդեն փոփոխված Առաջարկների ներկայացումը Պատվիրատուին, մինչև վերջինիս համար ընդունելի Առաջարկի ներկայացումը կամ մինչև այն պահը, երբ Պատվիրատուն կտեղեկացնի Կապալառուին, որ այլևս հետաքրքրված չէ սույն Նախնական Պատվերի հետ կապված ներկայացվող Առաջարկներով:</p>	<p>2.4. In case if the Offer is not accepted by the Customer, the Customer executes the actions defined by clause 2.2.2. of the Terms, and the Contractor is obliged to conduct the provision to the Customer already modified Offers in the manner and within the time period defined by clause 2.2. of this Terms, until provision of the Offer that is acceptable for the Customer or until the moment when the Customer will inform the Contractor that is no more interested in the Offers being presented related to that certain Preliminary Order.</p>
<p>2.5. Պատվիրատուի կողմից սույն Պայմանների և Պայմանագրի հիման վրա Նախնական Պատվերի ներկայացումը և դրա հիման վրա Կապալառուի կողմից ներկայացված առաջարկների ուսումնասիրությունն ու քննարկումը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Պատվիրատուի կողմից Աշխատանքների պատվիրում,</p>	<p>2.5. Study and discussion by the Customer of the offers based on the Preliminary Order presented on the basis of this Terms and Contract, in no case shall be considered as ordering of Works by the Customer. Under this Terms and Contract solely the Customer's Order bilaterally approved by the Parties</p>

**Գործողության վայր/ Place of scope: ԳՅ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021**

<p>օժերտա կամ ակցեպտ: Սույն Պայմանագրով և Պայմանագրով բացառապես Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի հավելված 1-ով սահմանված ձևին համապատասխան Կողմերի կողմից երկկողմանի հաստատված Պատվերն է հանդիսանում հիմք Աշխատանքների կատարման համար:</p>	<p>in accordance with the template defined in appendix 1 of this Terms is considered as a basis for execution of the Works.</p>
<p>2.6. Կապալառուն պարտավոր է ընդունել և հաստատել Պատվիրատուի կողմից կազմված և Կապալառուին ներկայացված Պատվերը՝ այն ստանալու պահից 2 (երկու) օրվա ընթացքում: Եթե Կապալառուն սահմանված ժամկետում չի հաստատում Պատվերը կամ չի ներկայացնում հիմնավորված դիտողություններ Պատվերում պարունակվող տեղեկատվության վերաբերյալ, ապա Պատվերը համարվում է հաստատված Կապալառուի կողմից և նրա մոտ առաջանում է Աշխատանքների կատարման պարտավորություն՝ Պատվերով սահմանված կարգով և պայմաններով: Կապալառուն կարող է հրաժարվել Պատվերն ընդունելուց միայն այն դեպքում, երբ դրանում պարունակվող տեղեկատվությունը հակասում է սույն Պայմանագրին կամ ՀՀ օրենսդրությանը:</p>	<p>2.6. The Contractor shall accept and confirm the Order composed and presented by the Customer to the Contractor within 2 (two) days upon receipt of the Order. If the Contractor does not inform the Customer about acceptance of the Order within the mentioned term or does not present well-grounded observations on the information, contained in the Order, such order shall be considered approved by the Contractor and obligation of the Contractor to execute Works shall arise. The Contractor may reject to accept the Order only in the case, if the information, contained in the Order, contradicts this Contract or RA legislation.</p>
<p>2.7. Եթե համապատասխան Պատվերով սահմանված Աշխատանքների կատարման ընթացքում, Կողմերի փոխադարձ համաձայնությամբ անհրաժեշտություն է առաջանում որոշակի փոփոխություն կատարելու տվյալ Պատվում, ներառյալ, բայց չսահմանափակվելով, Աշխատանքների կատարման ժամկետները, Աշխատանքի արդյունքի որակը, քանակը, ապա Կողմերը երկկողմանի հաստատում են սույն Պայմանագրի հավելված 2-ով սահմանված ձևին համապատասխան փոփոխված պատվերը (այսուհետ՝ Փոփոխված Պատվեր), և Աշխատանքի արդյունքի հանձնում-ընդունումը և դրանց դիմաց վճարումն իրականացվում է արդեն ըստ համապատասխան Փոփոխված Պատվերի: Կողմերը փոխադարձաբար ընդունում են, որ Փոփոխված Պատվերը Կողմերի կողմից երկկողմանի հաստատելու պահից Պատվերը, որը փոփոխվում է տվյալ Փոփոխված Պատվերով, համարվում է ուժը կորցրած:</p>	<p>2.7. If during the execution of the Works stated by the respective Order there is a need of implementing certain modifications to the Order based on mutual agreement of the Parties, including, but not limited, terms of execution of the Works, quality and quantity of the result of the Works, then the Parties bilaterally approve the modified order based on the appendix 2 of this Terms (hereinafter referred as to the "Changed Order"), and the delivery and acceptance and the payment for the result of the Works is performed already in accordance to the Changed Order. Parties agree that from the moment of the bilateral approval of the Changed Order the relevant Order, which is being changed by the Changed Order, shall be deemed terminated.</p>
<p>2.8. Եթե սույն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով Կողմերի միջև փոխհամաձայնեցվում և երկկողմանի հաստատվում է Փոփոխված Պատվեր, ապա համապատասխան Փոփոխված Պատվերը երկկողմանի հաստատելու պահից սկսած Պայմանագրով և Պայմանագրով սահմանված Աշխատանքների կատարման գնի, վճարման, ընդունման և ցանկացած այլ պայման, որի համար որպես հիմք Պայմանագրով սահմանված է համապատասխան Պատվերը, ենթակա է կատարման որպես հիմք ընդունելով համապատասխան Փոփոխված Պատվերը:</p>	<p>2.8. If as set forth in this Terms and Contract, Changed Order will be mutually agreed and bilaterally approved by the Parties, then from the moment of bilateral approval of the respective Changed Order, the terms of execution of the Works, price, payment, acceptance and any other term, for what the respective Order is defined by the Contract as basis, is a subject to execution taking as basis relevant Changed Order.</p>
<p>2.9. Սույն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված կարգով երկկողմանի հաստատված Պատվերները և/կամ Փոփոխված Պատվերները կցվում են Պայմանագրին որպես անբաժանելի մաս:</p>	<p>2.9. The Orders and/or the Changed Orders bilaterally approved as set forth by this Terms and Contract shall be attached to the Contract as an integral part.</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

3. ԱՄԽԱՅՈՒՄ	3. ESTIMATE
<p>3.1. Կապալառուն պարտավորվում է կատարել Աշխատանքները Կողմերի կողմից հաստատված սույն Պայմանների հավելվածը հանդիսացող Նախահաշվի (այսուհետ՝ Նախահաշիվ) հիման վրա, որում նշվում են տեղեկություններ Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների և այլ առարկաների տեսականու, որակի, քանակի, արժեքի վերաբերյալ:</p>	<p>3.1. The Contractor is obliged to execute the Works on the basis of estimate (hereinafter referred as to the Estimate) considered as an integral part of this Terms and approved by the Parties, in which information on the range, quality, quantity, price of materials, equipment and other things are noted.</p>
<p>3.2. Աշխատանքների կատարման ընթացքում ելնելով անհրաժեշտությունից Նախահաշիվը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:</p>	<p>3.2. Within execution of the Works based on the needs the Estimate may be changed in accordance with the mutual written agreement of the Parties.</p>
4. ՆՅՈՒԹԵՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ	4. MATERIALS, EQUIPMENT AND TOOLS
<p>4.1. Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերը, սարքավորումները և այլ ապրանքները ձեռք են բերվում Նախահաշվին համապատասխան Պատվիրատուի կամ Կապալառուի կողմից:</p>	<p>4.1. The materials, equipment and tools necessary for the Works execution are purchased by the Customer or the Contractor in accordance with the Estimate.</p>
<p>4.2. Նյութերը, սարքավորումները և գործիքները Կապալառուի կողմից ձեռք բերվելու դեպքում Կապալառուի կատարած ծախսերը ներառվում են Պայմանագրով սահմանված պայմանագրի գնի մեջ:</p>	<p>4.2. In case the materials, equipment and tools are purchased by the Contractor, the expenses made by the Contractor shall be included in the price of the Contract defined by the Contract.</p>
<p>4.3. Պատվիրատուի կողմից ապահովվող նյութերը, սարքավորումները և գործիքները Կապալառուին են հանձնվում հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ Նախահաշվով սահմանված ժամկետներում:</p>	<p>4.3. Materials, equipment and tools provided by the Customer shall be hand-over to the Contractor on the basis of the acceptance act within terms defined by the Estimate.</p>
<p>4.4. Կապալառուն պատասխանատվություն է կրում Պատվիրատուի կողմից ապահովվող նյութերի, սարքավորումների և գործիքների պահպանության համար և ամբողջությամբ կրում է դրանց վնասման ու ոչնչացման ռիսկը: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուի տրամադրած նյութերն օգտագործել ինայոպաբար, աշխատանքի ավարտից հետո Պատվիրատուին հաշվետվություն ներկայացնել այդ նյութերը ծախսելու մասին, ինչպես նաև նրան վերադարձնել դրանց մնացորդը կամ Պատվիրատուի համաձայնությամբ նվազեցնել աշխատանքի գինը՝ իր մոտ մնացած չօգտագործված նյութի արժեքի հաշվառմամբ:</p>	<p>4.4. The Contractor takes responsibility for the maintenance of the materials, equipment and tools provided by the Customer and fully takes the risk of loss or damage thereof. The Contractor is obliged to efficiently use materials provided by the Customer, provide report on usage of materials at the end of the Work and return the unused balance or with the Customer's agreement, to reduce the price of Work excluding the price of unused materials.</p>
<p>4.5. Պատվիրատուի կողմից Կապալառուին հանձնված նյութերը, սարքավորումները և գործիքները Պատվիրատուին պետք է վերադարձվեն հանձնման-ընդունման ակտով՝ նույն վիճակում որը նշված է սույն Պայմանների 4.3. կետում նշված հանձնման-ընդունման ակտում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:</p>	<p>4.5. Materials, equipment and tools transferred by the Customer to the Contractor shall be returned to the Customer on the basis of the acceptance act in the same condition mentioned in the acceptance act noted in clause 4.3. of this Terms taking into consideration the natural wear.</p>
<p>4.6. Նյութերը, սարքավորումները և գործիքները Աշխատանքների կատարման վայր հասցնելու պարտավորությունը կրում է դրանք ապահովող կողմը:</p>	<p>4.6. The Party providing materials, equipment and tools is liable for delivery thereof to the place of Works Execution.</p>
<p>4.7. Լրացուցիչ նյութերի, սարքավորումների և գործիքների անհրաժեշտություն առաջանալու դեպքում դրանք պետք է ձեռք բերվեն (ապահովվեն) Կապալառուի կողմից և հաշվին:</p>	<p>4.7. In case additional materials, equipment and tools are needed, they must be purchased (provided) by Contractor and at the expence of Contractor.</p>
<p>4.8. Կապալառուն Աշխատանքները պետք է կատարի բացառապես Նախահաշվում նշված որակական և</p>	<p>4.8. The Contractor shall execute the Works exclusively of materials, equipment and tools with the quality and quantity characteristics defined by the Estimate.</p>

Գործողության վայր/ Place of scope: ԶԶ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>քանակական հատկանիշներն ունեցող կյուբերով, սարքավորումներով և գործիքներով:</p>	
<p>4.9. Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի կողմից տրամադրված սարքավորումների վրա չտեղադրել ոչ մի ծրագրային ապահովումներ կամ ցանկացած այլ եղանակով փոփոխել սարքավորումների կարգավորումները, առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության:</p>	<p>4.9. The Contractor agrees not to install any software or otherwise modify any settings of the devices provided by the Customer without the prior written consent of the latter.</p>
<p>4.10. Պատվիրատուի տեղեկատվական համակարգին հասանելիություն ունեցող Կապալառուի աշխատողների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է վերահսկվի Կապալառուի կողմից Պայմանագրի գործողության ընթացքում:</p>	<p>4.10. The Contractor must make it possible to track the name of all employees who are utilizing a certain user access to the Customers information systems at any time during the term of the Contract.</p>
<p>5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p>5. CONDITIONS OF EXECUTION OF THE WORKS</p>
<p>5.1. Պայմանագրով Կապալառուն պարտավորվում է կատարել Աշխատանքները ԶԶ օրենսդրությամբ, սույն Պայմաններով, Պայմանագրով, Պատվերով, նախահաշվով սահմանված, ինչպես նաև համապատասխան աշխատանքներին սովորաբար ներկայացվող պահանջներին համապատասխան:</p>	<p>5.1. Under the Contract the Contractor shall execute the Works in accordance with the provisions defined by RA legislation, this Terms, the Contract, the Order and the Estimate and the requirements usually made for work of the respective kind.</p>
<p>5.2. Կապալառուն պարտավորվում է Աշխատանքները կատարել և Աշխատանքի արդյունքն Պատվիրատուին հանձնել Կողմերի միջև փոխհամաձայնեցված և համապատասխան Պատվերում նշված ժամկետում, իսկ նման ժամկետի բացակայության դեպքում՝ համապատասխան Պատվերի երկկողմանի հաստատումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում: Պատվերում կարող են սահմանվել նաև Աշխատանքների կատարման փուլեր և դրանց համապատասխան միջանկյալ ժամկետներ:</p>	<p>5.2. The Contractor is obliged to execute the Works and transfer the result of the Works within the term agreed between the Parties and mentioned in the relevant Order, or, in case of absence of the latter, within 20 working days after bilateral approval of the relevant Order. In the Order periods of Works execution and the relevant intermediate terms may be defined.</p>
<p>5.3. Այն պարագայում, երբ Կապալառուին հայտնի է դառնում, որ Աշխատանքի իրականացում ժամկետից ուշանում է կամ կարող է ուշանալ ցանկացած պատճառով, ապա նա պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին ժամկետի ուշացման պատճառի և Աշխատանքի իրականացման գործընթացի վրա ակնկալվող հետևանքի վերաբերյալ՝ տրամադրելով հիմնավորող փաստաթղթեր:</p>	<p>5.3. Whenever the Contractor becomes aware that the progress of the Work is being or is likely to be delayed due to any cause, it shall forthwith notify the Customer of the cause of the delay and its anticipated effect upon the progress and completion of the Work, providing supporting documentation.</p>
<p>5.4. Կապալառուի կողմից սույն Պայմանների 5.2. կետով սահմանված պարտականությունը չկատարելու արդյունքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրից և/կամ համապատասխան Պատվերից և/կամ Աշխատանքի արդյունքից կամ պատվիրել աշխատանքների իրականացումն այլ վայրից և/կամ պահանջել հասցված վնասների հատուցում սույն Պայմանների 10.2 կետի համաձայն:</p>	<p>5.4. If as a result of non-execution of obligations defined by the clause 5.2. herein by the Contractor the Customer is entitled to unilaterally terminate the Contract and/or relevant Order and/or reject the result of the Works, fully or partially, or to order the execution of the Works from elsewhere and/or claim any associated damages according to the clause 10.2 of this Terms.</p>
<p>5.5. Պայմանագրով Կապալառուն պարտավորվում է Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնել համապատասխան Պատվերում նշված հասցեում, իսկ դրա բացակայության դեպքում՝ Պայմանագրում նշված Պատվիրատուի գործունեության հասցեում:</p>	<p>5.5. The Contractor is obliged to transfer the result of the Works to the Customer at the address defined by the relevant Order, or, in case of absence of the latter, at the activity address of the Customer defined by the Contract.</p>
<p>5.6. Կապալառուն Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս դրա հետ մեկտեղ Պատվիրատուին պետք է հաղորդի նաև</p>	<p>5.6. The Contractor is obliged to provide to the Customer, together with the result of the Works, information concerning the exploitation or other conditions of the usage thereof which</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>տեղեկատվություն դրա շահագործման և օգտագործման այլ պայմանների մասին, որոնք անհրաժեշտ են տվյալ Աշխատանքի արդյունքը նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:</p>	<p>is necessary for using the result of the Works per their special purpose significance.</p>
<p>5.7. Կապալառուն իրավասու չէ տալ, բանակցել, վաճառել, փոխանցել, թույլատրել կամ այլ եղանակով տնօրինել Պայմաններով և Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականություններն առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության: Պատվիրատուն կարող է զիջել սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված իր իրավունքները կամ պարտականությունները Պատվիրատուի ցանկացած ուղղակի կամ անուղղակի դուստր կամ կախյալ ընկերության, առանց Կապալառուի նախնական գրավոր համաձայնության:</p>	<p>5.7. The Contractor shall not be entitled to give, bargain, sell, assign, transfer, let or otherwise dispose of any or all of its rights and obligations under the Contract without the prior written consent of the Customer. The Customer may assign its rights or obligations under the Terms and the Contract to any direct or indirect Customer's subsidiary or affiliate without the prior written approval of the Contractor.</p>
<p>5.8. Կապալառուն չի ազատվում իր պարտականություններից, իր պարտականությունների ցանկացած մասը սույն Պայմաններով կամ Պայմանագրով սահմանված ենթակապալուններին հանձնարարելու պարագայում և ցանկացած ժամանակ պետք է առաջնային պատասխանատվություն կրի իր աշխատողներ, ենթակապալառուների, նրանց գործակալությունների և աշխատողների, և բոլոր այն անձանց գործողությունների և անգործությունների համար, որն անհրաժեշտ է եղել իրականացնել Կապալառուի կողմից Պայմանագրի շրջանակներում:</p>	<p>5.8. The Contractor shall not be relieved from any of its obligations by entering into a sub-contract for the performance of any part of its obligations under the Terms or the Contract and shall at all times remain primarily responsible and liable for the acts and omissions of its employees and all Sub-Contractors, their agents and employees, and all other persons required or utilized by the Contractor in the performance of any relevant Contract.</p>
<p>6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՈՒ</p>	<p>6. ACCEPTANCE OF WORKS</p>
<p>6.1. Մինչև կոնկրետ Պատվերով սահմանված Աշխատանքների ընդունումը Պատվիրատուն իրականացնում է Աշխատանքների ստուգում Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելու օրվանից սկսած 3 աշխատանքային օրվա ընթացքում ստուգելու Աշխատանքների համապատասխանությունը սույն Պայմաններին, Պայմանագրին, Պատվիրատուի պահանջներին և դրանում թերությունների առկայությունը կամ բացակայությունը, եթե այլ ժամկետ փոխհամաձայնեցված չէ:</p>	<p>6.1. Before acceptance of the result of the Works, defined by the precise Order, the Customer shall perform their examination within 3 working days upon transfer date, to check the compliance of the Works to this Terms, the Contract, Customer's requirements and for availability or absence of the deficiencies, unless other term is mutually agreed.</p>
<p>6.2. Պատվիրատուն ստորագրում է համապատասխան հաշիվ-ապրանքագիրը, եթե Աշխատանքները կատարվել են պատշաճ և ամբողջությամբ, ներառյալ բոլոր հայտնաբերված անհամապատասխանությունների և/կամ թերությունների վերացումը:</p>	<p>6.2. The Customer signs appropriate invoice if the Works are executed properly and in full, including elimination of all discovered discrepancies and/or deficiencies.</p>
<p>6.3. Աշխատանքի արդյունքի հետ կապված ռիսկերը Պատվիրատուին են փոխանցվում համապատասխան հանձնման-ընդունման ակտը Կողմերի կողմից երկկողմանի հաստատելու պահից:</p>	<p>6.3. The risks regarding the result of the Works are being passed to the Customer upon bilateral approval of the appropriate acceptance-delivery certificate by the Parties.</p>
<p>7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՆՀԱՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ</p>	<p>7. ELIMINATION OF DISCREPANCIES AND DEFICIENCIES OF THE RESULT OF THE WORKS</p>
<p>7.1. Սույն Պայմանների և/կամ Պայմանագրի պայմանների հետ անհամապատասխանությունների, և/կամ ներկայացուցչության և/կամ երաշխիքների խախտման, և/կամ Պայմանների և/կամ Պայմանագրի դրույթների չիրականացում կամ ոչ պատշաճ</p>	<p>7.1. In case of discovering any discrepancies with the terms of this Terms and/or Contract, any breach or default of the representations or warranties; and/or any breach or negligent performance or failure in performance of the terms of the Contract, including due to delay in Work execution and/or any</p>

**Գործողության վայր/ Place of scope: ԳՅ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021**

<p>իրականացում, ներառյալ Աշխատանքների իրականացման ժամկետի խախտում և/կամ ցանկացած թերություններ հայտնաբերելու դեպքում Պատվիրատուն իրավասու է պահանջել Կապալառուից կատարել հետևյալ գործողությունները՝</p>	<p>deficiency, the Customer is entitled to require from the Contractor to execute the following actions:</p>
<p>7.1.1. Կապալառուից պահանջել որջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան նման գրավոր և/կամ էլեկտրոնային եղանակով, և/կամ բանավոր պահանջ ստանալուց հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում վերացնելու բոլոր անհամապատասխանություններն ու թերությունները, կամ</p>	<p>7.1.1. To require from the Contractor elimination of the discrepancies and/or deficiencies within 7 (seven) working days after receiving such request in written and/or in electronic way, and/ or orally, or</p>
<p>7.1.2. Կապալառուից պահանջել համաչափորեն նվազեցնել Աշխատանքների համար սահմանված գինը, կամ</p>	<p>7.1.2. To require from the Contractor proportional reduction of the price established for the Works, or</p>
<p>7.1.3. Կապալառուից պահանջել հատուցել հայտնաբերված անհամապատասխանությունների և/կամ թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը:</p>	<p>7.1.3. To require from the Contractor compensation for its expenses for elimination of discovered discrepancies and/or deficiencies.</p>
<p>7.2. Կողմերը սույնով փոխադարձաբար ընդունում են, որ Կապալառուն պարտավոր է ստուգել Աշխատանքների արդյունքի որակը և համապատասխանությունը Պատվերին և Պատվիրատուի պահանջներին, մինչև տվյալ Աշխատանքների արդյունքի հանձնումը Պատվիրատուին:</p>	<p>7.2. The Parties hereby mutually accept, that the Contractor is obliged to inspect quality and compliance of the result of the Works to the Order and requirements of the Customer before hand-over of that result of the Works to the Customer.</p>
<p>7.3. Այն պարագայում, երբ Պատվիրատուն Աշխատանքն ընդունելուց հետո Աշխատանքում հայտնաբերել է Պայմանագրից շեղումներ կամ թերություններ, որոնք չէին կարող բացահայտվել ընդունման սովորական եղանակի ժամանակ (թաքնված թերություններ)՝ ներառյալ այնպիսիք, որոնք Կապալառուն դիտավորյալ թաքցրել է, պարտավոր է դրանք հայտնաբերելուց հետո՝ որջամիտ ժամկետում, այդ մասին հայտնել Կապալառուին:</p>	<p>7.3. In case when the Customer after receiving of the Work, finds out in the Work discrepancies and/or deficiencies from the Contract, which were not revealed during the usual way of acceptance (hidden deficiencies) including those, which the Contractor intentionally hid, than the Customer is obliged to notify the Contractor regarding it within reasonable period.</p>
<p>7.4. Եթե Կապալառուի կողմից սույն Պայմանների 7.2. կետով սահմանված պարտականությունը չկատարելու արդյունքում հայտնաբերվում են Աշխատանքների արդյունքի առաջադրվող պահանջների էական խախտումներ (չվերացվող կամ առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի չվերացվող կամ բազմիցս ի հայտ եկող անհամապատասխանություններ և/կամ թերություններ և/կամ այլ նման թերություններ), Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրից և/կամ համապատասխան Պատվերից և/կամ Աշխատանքի արդյունքից:</p>	<p>7.4. If as a result of non-execution of obligations defined by the clause 7.2. herein by the Contractor there are found essential violations of characteristics of the result of the Works (deficiencies, which cannot be eliminated, or cannot be eliminated without non-proportional expenses essential time lose or discrepancies and/or deficiencies which arise multiple time and/or other similar deficiencies), the Customer is entitled to unilaterally terminate this Contract and/or relevant Order and/or reject the result of the Works, fully or partially.</p>
<p>7.5. Վերոնշյալ կետում սահմանված պահանջների ներկայացումը չի սահմանափակում Պատվիրատուի իրավունքը՝ պահանջելու խախտման արդյունքում պատճառված վնասների հատուցում:</p>	<p>7.5. The provisions herein and the payment of penalties shall not preclude the right of the Customer to request compensation of damages caused as a result of such breach.</p>
<p>7.6. Անհամապատասխանությունների և/կամ թերությունների վերացումից հետո Աշխատանքների արդյունքի ստուգումը և ընդունումը իրականացվում է նույն կարգով, ինչպես սկզբնական հանձնում-ընդունումը:</p>	<p>7.6. After the elimination of the discrepancies and deficiencies the examination and acceptance is made in the same way as for the initial delivery.</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳՅ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	8. PRICE OF THE CONTRACT AND PAYMENT CONDITIONS
<p>8.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է Պայմանագրի հիման վրա կնքված բոլոր Պատվերներով սահմանված և կատարված բոլոր Աշխատանքների ընդհանուր գինը:</p>	<p>8.1. Total price of the Contract makes total amount of prices of the Works defined by all Orders of the Contract and executed works.</p>
<p>8.2. Պայմանագրի համապատասխան Պատվերի հիման վրա կատարվող Աշխատանքների գները սահմանվում են Պայմանագրին կից համապատասխան Պատվերում: Աշխատանքների գինը ներառում է Աշխատանքների ընթացքի և դրա արդյունքի համար վարձատրությունը:</p>	<p>8.2. The prices for the Works executed on the basis of the respective Order of the Contract shall be defined in the respective Order of the Contract. The price of the Works includes the payment for the process of the Works and their result.</p>
<p>8.3. Պատվիրատուն պարտավոր է պատշաճ կատարված Աշխատանքների գինը վճարել Կապալառուին, վերջինիս կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ տվյալ հաշիվ-ապրանքագիրը և համապատասխան Աշխատանքների հանձնման-ընդունման ակտը երկկողմանի հաստատելուց հետո սույն Պայմանագրով և Պայմանագրով նախատեսված կարգով:</p>	<p>8.3. The Customer shall pay to the Contractor the price of the properly executed Works based on the invoice presented by the Contractor, upon bilateral approval of the current invoice and acceptance-delivery certificate of the respective Works according to the terms defined by the Terms and Contract.</p>
<p>8.4. Եթե համապատասխան Աշխատանքների կատարման Պատվերի առկայությամբ սույն Պայմանագրին և Պայմանագրի պայմաններին համապատասխան առկա է նաև Փոփոխված Պատվեր, ապա Կապալառուն պարտավոր է տվյալ Աշխատանքների կատարման համար համապատասխան հաշիվ-ապրանքագիրը ներկայացնել Պատվիրատուին՝ ըստ Փոփոխված Պատվերի պայմանների:</p>	<p>8.4. If according to the conditions of this Terms and Contract there is a Changed Order regarding the Order of Works execution, the Contractor is obliged to issue the relevant invoice for that Works to the Customer based on the terms of Changed Order.</p>
<p>8.5. Սույն Պայմանագրի հիման վրա Աշխատանքների գինը վճարվում է Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով 60 (վաթսուհին) օրվա ընթացքում, եթե վճարման այլ պայման չի նշվում համապատասխան Պատվերում: Վճարման պարտավորությունը համարվում է կատարված Պատվիրատուի հաշվեհամարից վերը նշված գումարը դուրս գրելու օրվանից: Կապալառուն համաձայնում և ընդունում է, որ վերը նշված 60 օրվա վճարման ժամանակահատվածը Կապալառուի կողմից հատուկ դիտարկվել և համաձայնեցվել է և արդար ու ողջամիտ է՝ հաշվի առնելով Պատվիրատուի հետ Կապալի պայմանագրի ընդհանուր պայմանները:</p>	<p>8.5. The price for the Works based on this Contract shall be paid through bank transfer, within 60 (sixty) days if other payment term is not defined by the respective Order. The payment obligation is considered to be performed from the date of withdrawal of the above-mentioned amount from the bank account of the Customer. The Contractor acknowledges and accepts that the above 60 days' payment period has been specifically considered and agreed by the Contractor and is fair and reasonable taking into account the overall general terms of the Work contract with the Customer.</p>
<p>8.6. Աշխատանքների կատարման ընթացքում Կապալառուի ստացած խնայողությունները բաշխվում են Կողմերի միջև՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:</p>	<p>8.6. The savings attained by the Contractor within the execution of this Contract shall be allocated between the Parties with the following proportion.</p>
9. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	9. INTELLECTUAL PROPERTY RIGHTS
<p>9.1. Կողմերի կողմից Աշխատանքների կատարման համապատասխան հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո, պայմանագրային պարտավորությունների իրականացման հետ կապված Կապալառուի գործունեության նկատմամբ բոլոր բացառիկ (սյուբսական) մտավոր սեփականության իրավունքները (այսուհետ՝ Բացառիկ իրավունքներ) կփոխանցվեն Պատվիրատուին՝ այն պայմանով, եթե Պատվիրատուն վճարել է Պայմանագրի համաձայն իրականացված աշխատանքների համար:</p>	<p>9.1. Upon signing by the Parties of the relevant Works acceptance-delivery act all exclusive (tangible) intellectual property rights for the results of the Contractor's activity related to performance of its obligations hereunder (hereinafter referred to as the Exclusive Rights) shall pass to the Customer, provided that the Customer paid for the Works executed in accordance with the terms of the Contract.</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳՅ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>9.2. Սույն Պայմանագրում և Պայմանագրում «Մտավոր սեփականության իրավունքները» նշանակում են արտոնագրեր, օգտակար մոդելներ, գյուտի իրավունքներ, հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ և վերաբերելի իրավունքներ, ապրանքային և սպասարկման նշաններ, ֆիրմային անվանումներ և դոմենային անուններ, արտաքին տեսքի և ֆիրմային ոճի իրավունքներ, բարի կամքի կամ անբարեխիղճ մրցակցության կանխման իրավունքը, նմուշների, տվյալների բազայի նկատմամբ իրավունքներ, չբացահայտված տեղեկատվության օգտագործման և պաշտպանության (ներառյալ նոու-հաու և առևտրային գաղտնիք), ինչպես նաև մտավոր սեփականության այլ իրավունքներ, յուրաքանչյուր դեպքում, լինի դա գրանցված կամ չգրանցված, ներառյալ բոլոր հայտերը և դիմելու իրավունքները և դրանց տրամադրումը, նորացումը կամ երկարաձգումը, ինչպես նաև նման իրավունքներից և բոլոր նմանատիպ կամ համարժեք իրավունքներից կամ պաշտպանության ձևերից նախապատվություն ստանալու իրավունքը, որոնք գոյություն ունեն կամ գոյություն կունենան այժմ կամ ապագայում աշխարհի ցանկացած մասում:</p>	<p>9.2. In this Terms and the Contract “Intellectual Property Rights” mean patents, utility models, rights to inventions, copyright and neighbouring and related rights, trademarks and service marks, business names and domain names, rights in get-up and trade dress, goodwill and the right to sue for passing off or unfair competition, rights in designs, database rights, rights to use, and protect the confidentiality of confidential information (including know-how and trade secrets), and all other intellectual property rights, in each case whether registered or unregistered and including all applications and rights to apply for and be granted, renewals or extensions of and rights to claim priority from such rights and all similar or equivalent rights or forms of protection which subsist or will subsist now or in the future in any part of the world.</p>
<p>9.3. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած պահի իր հայեցողությամբ օգտվել իր բացառիկ իրավունքներից և փոխանցել դրանք ցանկացած երրորդ անձի:</p>	<p>9.3. The Customer is entitled to use Exclusive Rights any time, by all means at its own discretion, and to transfer the Exclusive Rights to any third parties.</p>
<p>9.4. Կապալառուն ունի անձնական ոչ գույքային բոլոր իրավունքներն իր գործողությունների արդյունքների համար:</p>	<p>9.4. The Contractor holds all personal non-property rights for the results of its activity.</p>
